

Կիսամիայ Քննութեան Ամփոփում

Առաջին Մաս,-Ինչո՞ւ Կարելոր է Քննել Պատմութիւնը

Մինչեւ հիմա մեր սորված հայոց պատմութիւնը առասպելներու վրայ հիմնուած էր: **Առասպելները** պատմութիւններ են, որոնք բերանացի կը փոխանցուին, այսինքն ուրիշին կը տրուին, սերունդէ սերունդ: Ժամանակի ընթացքին անոնք կը չափազանցուին (to exaggerate, չափէն դուրս ելլել):

Առասպելական պատմութիւններու օրինակներէն կրնանք յիշել,-

- Հայկի եւ Բելի պատմութիւնը
- Արա գեղեցիկի պատմութիւնը
- Տորք Անգեղի պատմութիւնը
- Սասունցի Դաւիթի պատմութիւնը

Հայ ժողովուրդի **պատմիչ՝ Մովսէս Խորենացի** դարեր առաջ գրած է առասպելական պատմութիւնները: Առասպելական պատմութիւնները պետք է քննենք: Երբ քննենք, կը հասկնանք թէ պատմութեան հերոսը չի ներկայացներ մէկ անձ: Օրինակ՝ Հայկ նահապետ կը ներկայացնէ ամբողջ հայ ժողովուրդը եւ անոր պայքարը իր թշնամիներուն դէմ:

Ժողովուրդի մը պատմութիւնը աւելի ճիշդ գիտնալու համար, կարելոր է սորվիլ այդ ժողովուրդին քննական պատմութիւնը: Այս մէկը կարելի է ընել **հնագիտութեան (archeology)** միջոցաւ: **Հնագետը (archeologist)** երկրի մը հողը կը պեղէ, այսինքն կը փորէ եւ մեջտեղ կը բերէ անոր տակ թաղուած առարկաները: Այսպէս է, որ մենք այսօր լաւ գաղափար ունինք թէ մեր նախահայրերը ինչպիսի կեանք ունէին եւ ինչպիսի մշակոյթ:

Պատասխանենք հարցումներուն

1. Ի՞նչ է առասպելը. Կրնա՞ս երկու օրինակ տալ:

2. Ո՞ր պատմիչը գրած է հայոց առասպելները:

3. Հնագետներուն գտած առարկաները ինչո՞ւ կարելոր են:

Երկրորդ Մաս.- Հայաստանի Աշխարհագրություն (Geography)

Մենք լաւ կը յիշենք թէ տարածքային տարբերութիւն կայ Պատմական Հայաստանի եւ այսօրուան Հայաստանի միջեւ:

Պատմական Հայաստանը աւելի մեծ է: Իր սահմաններէն ներս կը գտնենք,-

- Հիւսիսէն՝ Չաւախք
- Հարաւէն՝ Նախիջեւան
- Արեւելքէն՝ Ամբողջական Արցախ
- Արեւմուտքէն՝ արեւմտեան Հայաստան
- Եւ անշուշտ այսօրուան Հայաստանի տարածքը

Ի՞նչ կը նշանակէ այս մէկը: Պէտք է լաւ հասկնանք թէ տարիներու ընթացքին, Հայ ժողովուրդի թշնամիները մեր հողերը գրաւելով, պատմական Հայաստանը պզտիկցնելով վերածած են այսօրուան Հայաստանի սահմաններուն: Տեսնենք քարտէսը,-



Figure 1 Source; <http://www.sup.org>

Մեր ուշադրութիւնը դարձնենք քարտէսին վրայի երկու թիւերուն: Թիւ 1ը կը ներկայացնէ պատմական Հայաստանի սահմանները, իսկ թիւ 2ն կը ներկայացնէ այսօրուան Հայաստանի սահմանները: Կը տեսնենք որքա՞ն է տարածքային տարբերութիւնը: Կը նկատենք թէ որքա՞ն փոքր է այսօրուան Հայաստանը պատմական Հայաստանէն:

Հետեւեալ երկիրները գրաւուած են մեր պատմական հողերը՝

- Ջաւախքը, հիւսիսէն, Վրաստանի տիրապետութեան տակ է
- Նախիջեւանը, հարաւէն, Ազրպէյճանի տիրապետութեան տակ է
- Արցախի մէկ մասը, արեւելքէն, Ազրպէյճանի տիրապետութեան տակ է
- Արեւմտեան Հայաստանը, արեւմուտքէն, Թուրքիոյ տիրապետութեան տակ է

Հայկական Բարձրաւանդակը

- Պատմական Հայաստանը բարձր լեռներու աշխարհ մըն է: Իր շուրջի երկիրներէն բարձր դիրք ունի եւ ասոր համար ան կը կոչուի **Հայկական Բարձրաւանդակ**: Ան ունի բարձր լեռներ եւ կանաչ դաշտեր: Պատմական Հայաստանի Լեռներէն յիշենք քանի մը հատը,-
 - Արարատը, որ ունի երկու գագաթ, Մեծ Մասիս եւ Փոքր Մասիս: Արարատ լեռը դարեր շարունակ եղած է Հայ ժողովուրդին խորհրդանիշը եւ այսօր կը գտնուի Թուրքիոյ սահմաններէն ներս:
 - Արագածը, որ ունի չորս գագաթներ: Ան այսօր կը գտնուի Հայաստանի Հանրապետութեան սահմաններէն ներս:
 - Հայաստանը կը գտնուի Ասիական ցամաքամասին մէջ: Հայկական բարձրաւանդակը Ասիան եւ Եւրոպան իրարու կապող կէտ մըն է:
 - Պատմաւոր Հայաստանը բնական հարստութիւն ունի: Ան **ջրառատ** (շատ ջուր ունեցող) է եւ ունի լիճեր եւ գետեր: Յիշենք տարբերութիւնը գետին, որը հոսող ջուր է, եւ լիճին որը ցամաքով շրջապատուած եւ ջուրով լեցուն տարածք մըն է որ չի հոսիր: Պատմական Հայաստանի կարելոր **լիճերն** են,-
 - Սեւանայ Լիճ, որ կը գտնուի այսօրուան Հայաստանի սահմաններուն մէջ
 - Վանայ Լիճ, որ կը գտնուի Թուրքիոյ մէջ
 - Ուրմիոյ Լիճ, որ կը գտնուի Իրանի մէջ
- Պատմական Հայաստանի կարելոր գետերն են,-
- Արաքս կամ Մայր Արաքս գետը, որ Հայաստանն ու Թուրքիան կը բաժնէ իրարմէ
 - Եփրատ գետը, որ կը գտնուի Թուրքիոյ մէջ
 - Տիգրիս գետը, որ կը գտնուի Թուրքիոյ մէջ

Հայկական Բարձրաւանդակը երկրաշարժի երկիր է, որովհետեւ կը գտնուի շրջանի մը մէջ, ուր գետինը շատ կայուն չէ, այսինքն Հայաստանի գետինը կը շարժի: Պատմութեան ընթացքին զանազան երկրաշարժներ պատահած են հոն: **1988ի Ղեկտեմբեր 7ին էր**, որ Հայաստանի Հանրապետութեան հիւսիսային շրջանը (Շիրակի մարզը, մասնաւորապէս Կիւմրի, Լենինական եւ Սպիտակ քաղաքներուն մէջ) ահաւոր երկրաշարժի մը հետեւանքով հազարաւոր հայեր մեռան եւ կորսնցուցին իրենց տուները:

Յիշե՛նք Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Քարտէսները եւ անոնց մանրամասնութիւնները,-

Այսօրուան Հայաստանը քանի՞ մարզէ կը բաղկանայ:

Այսօրուան Հայաստանի մայրաքաղաքը ի՞նչ է:

Թուէ՛ցէ՛ք այսօրուան Հայաստանի հիւսիսը, հարաւը, արեւմուտքը եւ արեւելքը գտնուող երկրներուն անունները:

Հիւսիս

Հարաւ

Արեւելք

Արեւմուտք

Քանի՞ կարէտը լիճ ունի այսօրուան Հայաստանը:

Ո՞ր գետը կը բաժնէ այսօրուան Հայաստանը եւ Թուրքիան:

Ամբողջացուցե՛ք քարտերը գրելով Հայաստանի Հանրապետության մարզերուն անունները, եւ անոր սահմանակից չորս երիրներուն անունները:



Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը քանի՞ մարզերէ կը բաղկանայ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան մայրաքաղաքը ի՞նչ է:

Թուեց՝ ք Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հիւսիսը, հարավը, արեւմուտքը եւ արեւելքը գտնուող երկիրներուն անունները:


Հիւսիս

Հարավ

Արեւելք

Արեւմուտք

Ամբողջացուցէ՛ ք քարտէսը գրելով Հայաստանի Հանրապետության մարզերուն անունները, եւ անոր սահմանակից չորս երկիրներուն անունները:



Շնորհաւոր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ: Յիշե՛նք սիրելիներ, թէ Հայ Առաքելական Եկեղեցին, Սուրբ Ծնունդը, այսինքն Յիսուս մանուկի ծնունդը կը տօնէ **Յունուար 6ին**: Լաւ տարիներ եւ բարի արձարկուրդ:

